ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը		*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Արձանագրություն	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԱԳՆՊՏ 2017.07.26/1(38)	*Ընդունման վայրը*	
Ընդունող մարմինը	Հայաստանի Հանրապետություն	*Ընդունման ամսաթիվը*	15.06.2015
Ստորագրող մարմինը		*Ստորագրման ամսաթիվը*	15.06.2015
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	31.12.2016	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցների կառավարման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին

Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը, Տաջիկստանի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը, որոնք «Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագրի հիման վրա հանդիսանում են Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի մասնակիցներ (այսուհետ՝ Հիմնադրամի մասնակից պետություններ), մի կողմից, և

Եվրասիական զարգացման բանկը, որը հանդիսանում է միջազգային կազմակերպություն՝ ստեղծված «Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին» 2006 թվականի հունվարի 12-ի համաձայնագրին համապատասխան (այսուհետ՝ Բանկ), մյուս կողմից,

այսուհետ միասին՝ Կողմեր,

«Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցների կառավարման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 9-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝

համաձայնեցին ներքոնշյալի մասին.

Հոդված 1

Համաձայնագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Համաձայնագրի անվանման, նախաբանի և տեքստի մեջ «Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամ» և «ԵվրԱս�տՀ հակաճգնաժամային հիմնադրամ» բառերը փոխարինել «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամ» բառերով՝ համապատասխան հոլովով:

2. Համաձայնագրի 1-ին հոդվածը լրացնել նոր՝ 6-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Բանկն իրականացնում է Հիմնադրամի խորհրդի քարտուղարության գործառույթները՝ համաձայն Հիմնադրամի մասին կանոնադրության և Հիմնադրամի այլ կիրառելի փաստաթղթերի: Նշված գործառույթների իրականացման ընթացքում Բանկը նշում է, որ ինքը գործում է որպես Հիմնադրամի խորհրդի քարտուղարություն»:

3. Համաձայնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետի «ժբ» ենթակետից հանել «և Հիմնադրամի խորհրդի քարտուղարության» բառերը:

4. Համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերությունում «Հիմնադրամի միջոցների կառավարչի գործառույթները կատարելու» բառերից հետո ավելացնել «և Հիմնադրամի խորհրդի քարտուղարության» բառերը:

5. Համաձայնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետում «ԵվրԱսՏՀ-ի ինտեգրացիոն կոմիտեն» բառերը փոխարինել

«Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարությունը» բառերով:

6. Համաձայնագրի 9-րդ հոդվածի 2-րդ կետում «արձանագրություններով» բառից հետո ավելացնել «, որոնք ուժի մեջ են մտնում Ավանդապահի կողմից Հիմնադրամի մասնակիցներից և Բանկից դրանց ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից: Փոփոխություններ կատարելու մասին արձանագրություններն ուժի մեջ մտնելուց հետո համարվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը» բառերը:

Հոդված 2

1. Սույն Արձանագրությունը ստորագրման պահից ժամանակավորապես կիրառվում է Կողմերի կողմից՝ բացառությամբ այն Կողմի, որը վերապահում է կատարել սույն դրույթի՝ իր նկատմամբ չկիրառվելու կապակցությամբ: Սույն Արձանագրության վերաբերյալ այլ վերապահումներ չեն թույլատրվում:

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Հիմնադրամի մասնակիցներից և Բանկից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումն Ավանդապահի ստանալու օրվանից:

2. Սույն Արձանագրության մեկնաբանմանը և (կամ) կիրառմանն առնչվող վեճերը լուծվում են Համաձայնագրի 9-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան:

Կատարված է 2015 թվականի հունիսի 15-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն:

Սույն Արձանագրության բնօրինակը պահվում է Համաձայնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետում նշված Ավանդապահի մոտ, որը Հիմնադրամի մասնակից պետություններին, Բանկին, ինչպես նաև Համաձայնագրին միացած պետություններին և միջազգային կազմակերպություններին կուղարկի դրա հաստատված պատճենը:

Բելառուսի Հանրապետության անունից՝	**Եվրասիական զարգացման բանկ**
/ստորագրություն/	*/ստորագրություն/*
Ղազախստանի Հանրապետության անունից՝	*/ստորագրություն/*
Ղրղզստանի Հանրապետության անունից՝	*/ստորագրություն/*
Ռուսաստանի Դաշնության անունից	*/ստորագրություն/*
Տաջիկստանի Հանրապետության անունից	*/ստորագրություն/*
Հայաստանի Հանրապետության անունից	*/ստորագրություն/*

Հայաստանի Հանրապետության վերապահումը

«Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցների կառավարման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետությունը ժամանակավորապես չի կիրառի «Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցների կառավարման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությունը մինչև սույն Արձանագրության 2-րդ հոդվածով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համար դրա ուժի մեջ մտնելը:

Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար՝ */ստորագրություն/* **Խաչատրյան Գ. Գ.**

Արձանագրությունն ուժի մեջ է մտել 2016թ. դեկտեմբերի 31-ին